ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մարտի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-022-25.02.2019-ՊԱ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 303 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով լրացվող՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) գործող հոդվածը թողնել անփոփոխ՝ հետևյալ հիմնավորմամբ.

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում զինծառայողների պատրաստվածության գործընթացն իրականացվում է ուսումնական փուլերով, որոնց շրջանակներում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով հաստատված մարտական պատրաստության ծրագրով նախատեսված է պարտադիր զինվորական ծառայության առաջին հինգ ամիսների ընթացքում պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողի համապատասխան պատրաստության և զինվորական մասնագիտության ուսուցման, ստորաբաժանման կազմում ներդաշնակման և գործելու ամբողջական ցիկլը, որի շնորհիվ զինծառայողը ստանում է անհրաժեշտ պատրաստվածություն՝ մարտական հերթապահությունում ընդգրկվելու համար: Այսինքն՝ որևէ պարտադիր զինծառայող, առանց հնգամսյա պատրաստության ծրագիրն անցնելու, չի ներգրավվում մարտական հերթապահության մեջ: Նույն սկզբունքը գործում է նաև օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 26-րդ հոդվածի 5-րդ մասի և դրա հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 1675-Ն որոշման համաձայն «Ես եմ» ծրագրով պարտադիր զինվորական ծառայության կազմակերպման և իրականացման գործընթացում:

Ներկայացված նախագծի համաձայն՝ վերը նշված ուսուցման փուլը (մարտական պատրաստության ծրագիրը) ևս յոթ ամսով երկարաձգելը կհանդիսանա ուսուցման ծրագրի չհիմնավորված ընդլայնում (ծրագրի կրկնողություն), ինչը ոչ բարենպաստ ազդեցություն կունենա թե՛ զինվորական ծառայության կազմակերպման նպատակային գործընթացի, և թե՛ մարտական հերթապահություն իրականացնող զորամասի մարտական խնդրի կատարման վրա: Բացի դրանից՝ նախագծում հաշվի չի առնված այն հանգամանքը, որ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված է բացառություն, համաձայն որի՝ համապատասխան զինծառայողը կարող է ընդգրկվել մարտական հերթապահության մեջ, եթե նման

ցանկություն է հայտնել: Հետևաբար, կարող է ստացվել իրավիճակ, երբ մինչև սահմանված ժամկետի լրանալը, զինծառայողն իրավունք կունենա իր ցանկությամբ ներգրավվելու մարտական հերթապահության մեջ, ինչը բացառված է վերը նշված ուսուցման փուլը (մարտական պատրաստության ծրագիրը) չանցած լինելու դեպքում:

Հայտնում ենք նաև, որ նախագծի ընդունման դեպքում պետք է համապատասխան փոփոխությունների ենթարկվեն Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում ուսումնական փուլերը և մարտական պատրաստության ծրագրերը կանոնակարգող՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանները:

26 մարտի 2019 թվականի N 303 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գաբրիել Բալայանին նշանակել Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Պ-022-25.02.2019-ՊԱ-011/0*) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մարտի 26
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-022-25.02.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել 6-րդ կետով.

«6) որի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության անցնելու մեկ տարին չի լրացել:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Ներկայումս գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ հստակ եւ սպառիչ կերպով սահմանված է զինծառայողների ցանկը, որոնք չեն կարող ընդգրկվել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ: Այսպես, նշված ցանկի համաձայն մարտական հերթապահության մեջ չի կարող ներառվել այն զինծառայողը, որը

1) հանդիսանում է 63 տարին լրացած կամ III խմբի հաշմանդամություն ունեցող կամ II խմբի հաշմանդամություն ունեցող ծնողների (միայնակ ծնողի) միակ զավակը,

2) ունի ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների կամ զինված ուժերում եւ այլ զորքերում ծառայության ընթացքում, ինչպես նաեւ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում ծառայողական պարտականություններ կատարելիս զոհված (մահացած) հայր (մայր) կամ եղբայր (քույր),

3) ամուսնացած է եւ ունի մեկ երեխա,

4) ծնողները մահացած են,

5) մեկ ծնողը մահացած է եւ այդ զինծառայողն ընտանիքի միակ զավակն է, կամ ընտանիքի մյուս զավակներն անչափահաս են, կամ ընտանիքի մյուս զավակները չափահաս են եւ ունեն հաշմանդամություն կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել են անգործունակ:

Այսինքն՝ գործող իրավակարգավորման պարագայում, շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ընթացքում մարտական հերթապահության մեջ կարող են ընդգրկվել նաեւ զինվորական ծառայությանը կարճ ժամանակ առաջ զորակոչված եւ համապատասխան մարտական պատրաստվածություն դեռեւս չունեցող, որպես կանոն 18 տարին նոր լրացած, երիտասարդ զինծառայողները: Կարծում ենք անվիճելի է այն փաստը, որ սահմանը պետք է պահեն առավել բարձր մարտական պատրաստվածություն ունեցող զինծառայողները, ինչը սահմանի պահպանման հուսալիությունն ապահովելու հետ մեկտեղ կնպաստի նաեւ մարտական հերթապահության ժամանակ մարդկային կորուստների նվազեցմանը: Ուստի գտնում ենք, որ նշված խնդիրն արդիական է եւ իր լուծումը պետք է ստանա նաեւ օրենսդրական մակարդակով:

Ակնկալվող արդյունքները

Նախագծի ընդունման արդյունքում կբացառվի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության անցնելու մեկ տարին չլրացած զինծառայողների ներգրավումը մարտական հերթապահության մեջ: Արդյունքում մարտական հերթապահության մեջ կընդգրկվեն մարտական անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող զինծառայողները, ինչը կպաստի մարտական հերթապահության ժամանակ մարդկային կորուստների նվազեցմանը եւ կնպաստի սահմանի պահպանման հուսալիության բարձրացմանը: Բացի այդ, պարտադիր զինվորական ծառայության զորակոչված զինծառայողն էլ իր մարտական պատրաստվածությունը բարձրացնելու բավարար ժամանակ եւ հնարավորություն կունենա՝ հետագայում մարտական առաջադրանքներն էլ ավելի բարձր մակարդակով կատարելու համար: Նշվածն էլ անշուշտ իր դրական ազդեցությունը կունենա բանակի մարտունակության ընդհանուր մակարդակի բարձրացման հարցում: